



ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱԿԻՐԱԿ

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA
№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ
№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

*Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

*Նժդեհ Երանյան. պ. գ. թ. – նախագահ,
Հայկ Նազարյան, պ. գ. թ. – պատրաստանապու քարտուղար
Արա Սանճեան, PhD (ԱՄՆ), Արսեն Բորոխյան, պ. գ. թ.,
Համլետ Պետրոսյան, պ. գ. թ., պրոֆեսոր, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, պ. գ. թ., Հռիփսիմե
Պիկիցյան, պ. գ. թ., դոցենտ, Հրաչ Զիլինկիրեան, PhD (Մեծ
Բրիտանիա), Մխիթար Գաբրիելյան, պ. գ. թ., դոցենտ,
Պավել Ավետիսյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ռոբերտո Դան, PhD (Իտալիա), Ռուբեն Վարդանյան, պ. գ. թ.,
Տորք Դալայան, թ. գ. թ.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անասրիդա Ս. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկայթի դարի մշակույթում.
Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.)

8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բադայան

ՀԿ(Բ)Կ կենտրոնի նախագահության և քարտուղարության որոշումները
ԱՄԴԻՏՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.)

20

Սեդա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը
1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի)

43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության
որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.)

66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը
Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.)

78

ԱՉԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասարյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ
վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաագագրական ակնարկ)

104

Լիլիա Ավանեսյան

Մ. Գ. Իսակի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը
և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.)

124

Միսիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում
(առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն)

138

Աստղիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.)

150

Քարոշ Մալխասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.)

173

Հասմիկ Պերրոյան

Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Ծարուրյան

Չարենցի հուշարահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան

Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմաձագի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան

Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՅԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավերիսյան

Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՅԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան

Եվգենյա Գյուգալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

263

Հայկուհի Մուրադյան

Պատմական գիտությունների թեկնածու

Երևանի պետական համալսարան
haykuhi.muradyan@gmail.com

Նժդեհ Երանյան

Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պարմության թանգարան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
nzhdehyan@gmail.com

Համազասպ Աբրահամյան

Հայաստանի պարմության թանգարան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
abrahamyanhamazasp@gmail.com

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ*

Հիմնաբառեր. խորհրդային «Ձնհալ», «Ժողովուրդների եղբայրություն», խորհրդային ազգային ինքնություն, պատմական անցյալի կառուցակցում, երևակայած հասարակություն, Հայաստանի պատմության թանգարան, արխիվային նամակ:

Ներածություն

Հոդվածում ներկայացվում է 1960-ական թթ. «Ձնհալի» խորհրդային քաղաքականության համատեքստում ազգային ինքնությունների ձևավորման, ինքնությունների ակտուալացման, պատմական անցյալի կարևորման, որոշ ազգերի պարագայում՝ «նոր պատմական անցյալի ստեղծման» ընթացքը, եղբայրության քաղաքականության կոնկրետ դրսևորումները ազգային ինքնության և պատմական անցյալի կառուցակցման մեջ: Հետազոտությունը կարևորվում է Հայաստանի պատմության թանգարանի (այսուհետ՝ ՀՊԹ) արխիվային որոշ փաստաթղթերի հրատարակման, դրանց բովանդակային և գաղափարական վերլուծության տեսանկյունից: Հատկապես դիտարկել ենք խորհրդային ազգային ինքնության ձևավորման մեջ միջպետական ինստիտուցիոնալ կառույցների «եղբայրական» համագործակցության առանձնահատկությունները, խորհրդային լեզվական ձևակերպումները, պատմական անցյալի կառուցման խորհրդային մեխանիզմները:

* Ստացվել է 17.04.2023թ., ուղարկվել է գրախոսման 17.04.2023թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.: Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6A010 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Թեև խորհրդային՝ «ժողովուրդների եղբայրությունը» ստալինյան շրջանում ձևավորված քաղաքականություն էր, այն խրուշչովյան ձևալի քաղաքականության համատեքստում առավել ինստիտուցիոնալացվեց:

Ուսումնասիրել ենք 1930–1940 ական թթ. ՀՊԹ արխիվի որոշ փաստաթղթեր, որտեղ տեղեկություններ կան Հայաստանի պետական պատմական թանգարանից (այժմ՝ Հայաստանի պատմության թանգարան) տարբեր տարիներին ժամանակավոր կամ մշտական ցուցադրության նպատակով ԽՍՀՄ այլ երկրների թանգարաններին նյութեր փոխանցելու մասին¹:

Խորհրդային մշակութային քաղաքականությունը² և ազգային ինքնության կառուցումը

Ազգայնականության և ազգային ինքնության ձևավորման գործընթացները խորհրդային 1930-ական (ստալինյան միանձնյա կառավարման շրջան) և 1950–1960-ական թթ. («Ձևալի» տարիներ³) ակադեմիական գրականության լայն շրջանակի ուսումնասիրության թեմա են:

Խորհրդային Միության կազմում միութենական հանրապետությունների, ինչպես նաև զանազան ազգային միավորների ներառումը, պետությունների սահմանների գատումը, խորհրդային ազգային ինքնությունների ձևավորումը սկսեց 1920-ական թթ. և առավել հստակ քաղաքականության ուրվագիծ ընդունեց ստալինյան միապետական կառավարման համակարգի ժամանակ: 1920-ական թթ. ինքնությունների ձևավորումը հիմնվում էր ազգային էլիտաների, լեզվի և մշակութային առանձնահատկությունների ընդգծման, միևնույն ժամանակ այդ առանձնահատկությունների խորհրդային ինտերպրետացիաների վրա: Ինչպես նշում է

1 Ֆոնդային սպասարկման, արժեքավոր խորհուրդների և քննարկումների համար հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում ՀՊԹ գիտաշխատող, պատմական գիտությունների ընդհանուր Արմինե Զոհրաբյանին:

2 Կարծում ենք, որ խորհրդային մշակութային քաղաքականությունն իր առանձնահատուկ գծերով առավել համապատասխանում է Աբրահամ Մոլի առաջարկած սոցիոդինամիկ մոդելի «պատեռնալիստական» կամ «դոգմատիկ» ենթամոդելին, որը բնորոշվում է հետևյալ կետերով. 1. Մշակույթի կառավարումը պետական լիազորված մարմնի միջոցով: 2. Մշակույթի ֆինանսավորումը բացառապես պետական բյուջեի միջոցով (բացառվում է մասնավոր սեկտորի ներգրավվածությունը մշակութային քաղաքականության մշակման և իրացման մակարդակներում): 3. Մշակույթի համեմատաբար «կայուն» պլանավորված զարգացում (պլանային քաղաքականության մշակումը): 4. Կենտրոնացված՝ վերնից-ներքև մշակույթի կառավարման մեթոդի մշակումը (կենտրոնաձիգ-ուղղաձիգ պետական քաղաքականություն, որն ընդգրկում է հասարակական բոլոր ոլորտները և բնագավառները, այդ թվում նաև մշակույթը (Моль 2008, 25):

3 1956 թ. փետրվարին կայացած ԽՄԿԿ 20-րդ համագումարում Նիկիտա Խրուշչովը «Անձի պաշտամունքի և դրա հետևանքների մասին» իր զեկույցում քննադատեց ստալինյան բռնի շխառությունը, ինչն էլ հիմք դարձավ երկրում հետստալինյան հասարակական-մշակութային նոր իրավիճակի առաջացման համար: Սա Խորհրդային Միությունում իրականացվող բարեփոխումների առաջին փորձն էր, որն իր անվանումը փոխանեց Իլյա Էրենբուրգի՝ այդ տարիների խորհրդային կյանքը նկարագրող «Отепель» վիպակի վերնագրից, իսկ հետագայում հայերենում թարգմանաբար ամրագրվեց իբրև «Հայոցք» կամ «Ձևալ»։ Հարկ է նշել, որ «Ձևալը» տարածվեց Խորհրդային միության հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա՝ քաղաքականություն, տնտեսություն, սպորտ: Առավել արտահայտիչ այն դրսևորվեց մշակույթի ոլորտում:

խորհրդային շրջանի հետազոտող Թերրի Մարտինը. «[Բ]ոլշևիկները փորձեցին համատեղել ազգայնական պահանջները սեփական տարածքի, լեզվի, էլիտաների և սեփական մշակույթի զարգացման համար տնտեսապես և քաղաքականապես միասնական պետության սոցիալիստական ցանկության հետ» (Martin 2001, 13): Այս համատեքստում մշակվեց ազգային ինքնության կառուցման ինքնատիպ հայեցակարգ, որում հնարավոր եղավ միաժամանակ հաստատել և հերքել ազգայնականության (մեկ տարածք՝ մեկ մշակույթ) սկզբունքը:

Լենինյան քաղաքականությունն ուղղված էր խորհրդային հասարակությունների արդիականացմանը (Sury 1993), որը սկսվեց կուլտուրական հեղափոխությամբ, անգրագիտության վերացմամբ, խորհրդային առօրեականության ձևավորմամբ: Խորհրդային արդիականացումը ազգային ինքնությունների ձևավորման հիմքում կարևորում էր ազգային լեզուն, տարածքը, մշակույթը և ազգային էլիտան: Խորհրդային իշխանությունները ստեղծեցին մշակույթի ձևավորման բանաձև - ուղենիշը՝ «Ձևով ազգային, իսկ բովանդակությամբ խորհրդային»: Այս բանաձևի առաջին հատվածը սահմանում էր խորհրդային 20-ական թվականներին ազգային մշակույթի թույլատրելի սահմանը, օրինակ՝ ազգային լեզվի խրախուսումը, ազգային արվեստի զարգացումը, ազգային մտավորականների ընդունումը, և այլն, իսկ երկրորդ հատվածը շեշտում է, որ վերոնշյալ ազգայինը պետք է խորհրդային գաղափարախոսության շրջանակներում գործի և տարածվի, խորհրդային բովանդակությունը դառնում է պարտադիր մշակույթի բոլոր ոլորտներում (Ռ. Կ. Կ. 12-րդ համագումարի բանաձևը ազգային խնդրի առթիվ, «Կոմ(մ)ունիստ» 1923, № 4-5-6, 41-51):

Ստալինյան քաղաքականությունը 1930-ական թթ. ստեղծեց «թույլատրելի ազգայինի սահմանը», որից դուրս ցանկացած դրսևորում պիտակավորվում էր որպես «բուրժուական մնացորդ», «կապիտալիստական», «նացիոնալիստական» (ազգայնական) և/կամ «թշնամական»: Մասնավորապես իր ճառերից մեկում Ստալինը նշում է. «Ինչ է ազգային կուլտուրան: Ինչպե՞ս կարելի է այն զուգորդել պրոլետարական կուլտուրայի հետ: Մի՞թե չի ասել Լենինը դեռ պատերազմից առաջ, որ երկու կուլտուրա կա մեզանում՝ բուրժուական և սոցիալիստական, որ ազգային կուլտուրայի լոզունգը բուրժուազիայի հետադիմական լոզունգն է, որ աշխատում է թունավորել աշխատավորներին նացիոնալիզմի թույնով: Ինչպե՞ս կարելի է զուգորդել ազգային կուլտուրայի շինարարությունը պրոլետարական կուլտուրայի շինարարության հետ: ... Մենք պրոլետարական կուլտուրա ենք ստեղծում, որ սոցիալիստական է ըստ բովանդակության, սոցիալիստական շինարարությանը լծված այլ և այլ ազգերի մեջ արտահայտության տարբեր ձևեր ու եղանակներ է ընդունում՝ համեմատ տարբեր լեզուների, կենցաղի և այլն: Պրոլետարական՝ ըստ բովանդակության, ազգային՝ ըստ ձևի, ահա այն հանրամարդկային կուլտուրան, որին ձգտում է սոցիալիզմը: Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգայինը, այլ բովանդակություն է տալիս նրան: Եվ ընդհակառակը, ազգային կուլտուրան չի վերացնում պրոլետարականը, այլ ձև է տալիս նրան» (Քարամյան 1928, 45-52):

Ստալինյան քաղաքականությունը առանձնացնում է «ժողովուրդների բարեկամության» կարգախոսը և դրա հստակ ձևակերպումը: Ստեղծվում է խորհրդա-

յին միջ, որի համաձայն Խորհրդային Միության ժողովուրդները չունեն տարաձայնություններ կամ կոնֆլիկտներ, նրանք եղբայրական և բարեկամական հարաբերություններ ունեն, իրենց ազգային մշակութային տարբերությունները չեն ազդում խորհրդային բարեկամական մեծ պետությունում իրար հավասար իրավունքներով ապրելու համար: Ժողովուրդների բարեկամության գաղափարը իրատեսական, գործող մեխանիզմ դարձնելու համար ստալինյան քաղաքական համակարգը ձևակերպում է ազգային մշակույթի ձևաչափ, որը պետք է ընդօրինակելին բոլոր պետությունները և ազգությունները (ազգային երգ ու պար, էպոս, խորհրդային ընդհանուր պատմություն, նույնաբովանդակ դասագրքերի կազմում և այլն): Այս քաղաքականությունը մեծապես ազդեց հատկապես այն ժողովուրդների ինքնությունների կազմավորման վրա, որոնք պետք է «հորինելին» ազգային արժեքները, ստեղծելին «պատմական նառատիվներ», որոնք կլեգիտիմացնելին իրենց՝ այդ տարածքում լինելը և պետականացնելը: Նման ժողովուրդների թվին էր դասվում ադրբեջանական հանրույթը, որը որպես պետական միավոր ձևավորվեց խորհրդայնացման արդյունքում: Խորհրդային ազգային ինքնության ձևավորումը խորհրդային Ադրբեջանում սկսվեց 20-ական թվականներից, առաջ եկան բազմաթիվ տեսություններ՝ ծագման, նրանց պատմական անցյալի և ամենաէականը՝ Խորհրդային Ադրբեջանի տարածքային իրավասությունը ապացուցելու համար: Այդ տեսությունները առավել ինստիտուցիոնալացվեցին խրուչովյան «Ձնհալի» քաղաքականության համատեքստում, երբ խորհրդային ազգայինը՝ պահելով խորհրդային ձևաչափը, ստեղծում էր նոր ազգային բովանդակություն (Yurchak, 2005):

Մշակութային փոխառնչությունները և համագործակցության «խորհրդային լեզուն».

Չայաստանի պատմության թանգարանի օրինակով:

«Ժողովուրդների բարեկամության» կարգախոսը վերածվեց կոնկրետ քաղաքականության 1930-ական թթ. և ինստիտուցիոնալացվեց 1950–1960-ական թթ.: Փորձենք դիտարկել դա ՀՊԹ արխիվային նամակների ներկայացմամբ: Վերհանենք ՀՊԹ որոշ արխիվային նամակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են հարևան պետությունների մշակութային ինստիտուտները հաղորդակցվել, թանգարանային ցուցանմուշներ փոխառվել, ինչ հիմնական և ժամանակավոր ցուցադրություններ են կազմակերպվել: Կարևոր է դիտարկել նաև այդ նամակների «խորհրդային լեզուն», ձևակերպումները, նրանց բովանդակային և գաղափարական համատեքստը և ինստիտուցիաների գործունեությունը:

Այսպես, 1935 թ. «Իրանի արվեստի միջազգային կոնգրեսի» համար Հայաստանի Պետական պատմական թանգարանից նյութեր են փոխառվել (սկ. 1): Թանգարանը դրանք տրամադրել է մի քանի պայմանով.

- Ցուցանմուշները տրամադրվում են երկու ամսից ոչ ավել ժամկետով (սեպտեմբեր–հոկտեմբեր), քանի որ նոյեմբերի 29-ին բացվող Հայաստանի խորհրդայնացման 16-ամյակին նվիրված ցուցադրությանը ցուցանմուշները պետք է տեղում լինեն նոյեմբերի սկզբին:

- Պետական Էրմիտաժը իր վրա է վերցնում բոլոր ծախսերը ինչպես տեղափոխման դեպի Լենինգրադ և վերադարձ դեպի Երևան, այնպես և ուղեկցող պաշտոնական ներկայացուցչի:

Համաձայնություն ստանալուց հետո նյութերը փոխանցվել են Էրմիտաժին:

Հետաքրքիր է, որ Պատմության թանգարանից 1935 թ. հունիսի 21-ով թվագրված լուսավորության ժողովրդական կոմիսար Արտո Յիզիազարյանին ուղղված նամակում թանգարանի տնօրենը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ չնայած կազմ. Կոմիտեից ուղարկված նամակում վերադարձի մասին չի խոսել, սակայն թանգարանը կարող է այն տրամադրել երկու ամսից ոչ ավել ժամկետով:

Էրմիտաժը համաձայնում է այս պայմաններին, որի մասին գրությունով հայտնում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը (19.07.1935 թ.):

Էրմիտաժ ուղարկելու համար դիմում են նաև Նորին Վեհափառ Տ.Տ. Խոբրեն Կաթողիկոսին Ամենայն Հայոց, խնդրելով երկու ցուցանմուշ, որոնք եղել են ցուցակում, հանձնել թանգարանին, վերջում այն Էջմիածին վերադարձնելու պայմանով:

Չնայած նախնական պայմանավորվածությանը, դրանք երկու ամիս անց չեն վերադառնում Հայաստանի պետական պատմական թանգարան: Այդ մասին մի քանի անգամ բարձրաձայնում է թանգարանի տնօրենը:

Նույն տարվա վերջում տնօրենը նամակ է գրում պետական Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն, նշելով, որ չնայած ՌՍՖՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար Անդրեյ Բուբնովը համաձայնել է վերադարձնել 16 հնագիտական ցուցանմուշները երկու ամսից, դրանք հանձնվել են սեպտեմբերի 14, ժամկետն անցել է, սակայն չի վերադարձվել:

Նույն բովանդակությամբ նամակ ուղարկվում է նաև Արվեստի հարցերով կոմիսարիատ:

1936 թ. նոյեմբերի 16-ին № 211 գրությամբ թանգարանի տնօրեն Հակոբ Զորյանը դիմում է լուսավորության ժողովրդական կոմիսար Լ. Արիսյանին, տեղեկացնելով, որ երկու ամսով ցուցադրության ուղարկված նյութերը դեռ չեն վերադարձվել, ցուցադրումը շարունակվում է, Էրմիտաժին պաշտոնապես դիմել են, բայց պատասխան դեռ չի ստացվել: Նա խնդրում է դիմել Համամիութենական իրանական արվեստի վարչությանը (պատճենը՝ Էրմիտաժին)՝ թանգարանին պատկանող իրերը վերադարձնելու համար:

Դրան հաջորդում է Արիսյանի դիմումը Էրմիտաժի տնօրեն Հ. Օրբելուն, տեղեկացնելով, որ Էրմիտաժ է գործողվում թանգարանի աշխատակից Ժ. Գյուզալյանը՝ նյութերը Հայաստան տեղափոխելու նպատակով: Վերջիվերջո դրանք հանձնվում են թանգարանին: Դա է հաստատում Էրմիտաժից 1937 թ. հուլիսի 17-ին ստացված գրությունը, որով խնդրում են հաստատել, որ № 520 ակտով թանգարանին վերադարձվել է ամբողջ նյութը:

Ժամանակավոր ցուցադրության մասին այլ տվյալներ ևս առկա են: Այսպես՝ 1937 թ. հուլիսի 3-ին «Ստալինյան սահմանադրության» ցուցադրության նպատակով Մոսկվայում ՀԽՍՀ մշտական ներկայացուցչի միջոցով ԽՍՀՄ ժողովուրդներ

րի թանգարանի ներկայացուցիչ Ս. Վ. Դորոխինին է ժամանակավոր հանձնվում 25 առարկա: Ժամկետների և վերադարձի մասին որևէ բան չի նշվում (նկ. 2):

Մեկ այլ ժամանակավոր ցուցադրության մասին հայտնի է, որ Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Վ. Դ. Դոնդուային Ռուստավելուն նվիրված ցուցահանդեսի համար հանձնվում են նյութեր՝ մինչև մարտի 15 1938 թվականի (նկ. 3):

Մեկ այլ՝ 1938 թ. հուլիսի 3-ի ակտի համաձայն Ազգագրության բաժնի վարիչ Ստեփան Լիսիցյանը Մոսկվայում ՀԽՍՀ մշակույթի տան ներկայացուցիչ Բ. Ի. Ռաստուրսինից ստացել է առարկաներ, որոնք պահվում էին մշակույթի տանը (նկ. 4): Հայտնի չէ սակայն, թե սրանք երբ և որքան ժամանակով էին տեղափոխվել Մոսկվա:

Թանգարանային նյութերի փոխանակման և ցուցահանդեսների միջոցով ժողովուրդների բարեկամությանը խթանելու դեպքերը այսքանը չեն: Հայտնի են տվյալներ, երբ Հայաստանի պետական պատմական թանգարանից նյութեր են փոխանցվել ԽՍՀՄ որևէ այլ թանգարանի՝ մշտական պահպանության և ցուցադրման նպատակով:

1935 թ. օգոստոսի 11-ին Պետական պատմական թանգարանի Ազգագրական բաժինը կերպարվեստի թանգարանի դիրեկտոր ընկ. Ռուբեն Դրամբյանի ժողովածուի № 2462 ձեռագործը (եպիսկոպոսական զգեստի մի մաս վրացական մակագրությամբ, Ս. Աստվածածինը մանուկը գրկած և այդ ձեռագործի միջից հանած վրացերեն գրություններ) հանձնում է Վրաստանի թանգարանին՝ համարժեք հայկական ձեռագործների հետ փոխանակելու լիազորությամբ (նկ. 5):

Հայտնի է, որ ԽՍՀՄ ժողովուրդների թանգարանում գտնվող նյութերը ևս տեղափոխվել էին Պետական պատմական թանգարանից, բոլորը ազգագրական բնույթի առարկաներ են:

1939 թվականի մայիսի 25-ին կազմված մեկ այլ ակտի համաձայն Պետական պատմական թանգարանից Մոսկվայի Պետական պատմական թանգարանին է հանձնվել Դվինի 1937 թ. պեղումներից հայտնաբերված խեցեղեն և ապակե առարկաներ (նկ. 6):

Հետաքրքիր է մեկ այլ գրություն, ուղարկված Յալթայի երկրագիտական թանգարանին, որով շնորհակալություն են հայտնում պղնձե մատանիները թանգարանին հանձնելու կապակցությամբ, որոնք հայտնաբերված են եղել Ալավերդուց: Թանգարանից նաև հայտնում են, որ ի պատասխան Յալթայի թանգարանի գրության, Պետական պատմական թանգարանում Դրիմից միայն մի քանի խաչքար է գտնվում (նկ. 7):

Այս տեսանկյունից չափազանց հետաքրքիր է Ադրբեջանի պետական պատմության թանգարանից ստացված մի գրություն, որը ներկայացնում է ոչ միայն ժողովուրդների բարեկամության հանգամանքը, այլ նաև մշակութային ժառանգության միջոցով ադրբեջանական ժողովրդի ինքնության կառուցման ընթացքը:

«Ադրբեջանի հնագույն ժամանակաշրջանին նվիրված ցուցադրություն. ... խիստ անհրաժեշտ են քարեդարյան գործիքների օրինակներ ՀԽՍՀ ԳԱ Հայաստանի պատմության թանգարանից»

Խորհրդային 1960-ական թթ. բնորոշվում են հատկապես մշակույթի ոլորտում ազատականացմամբ և մշակութային «հալոցքով»: Այս շրջանում խորհրդային ազգերը սկսում են կրկին վերստեղծել և վերաձևակերպել ազգային ինքնությունները՝ փորձելով սահմանել «ո՞վ ենք մենք» և «ինչո՞վ ենք առանձնահատուկ»: Այս փնտրտուքը սկսվեց նաև ադրբեջանական գիտական շրջանակում, պատմականորեն տարածքային լեզվաբանության և ինքնության հերթական փնտրտուքի շրջան: Ադրբեջանական ինքնության կառուցումը 20-րդ դարում ընթացել է երեք տարբեր ազդեցություններով՝ իրանական, խորհրդային (ռուսական) և թյուրքական: Խորհրդային ազդեցությունը դոմինանտ էր Խորհրդային Ադրբեջանի ձևավորումից մինչև փլուզումը և Ադրբեջանի անկախացումը: Թեև արդեն ուշ-խորհրդային շրջանում սկսվում է ուրվածվել է Թուրքիայի ազդեցությունը ադրբեջանական ինքնության վրա, որը առավել ցայտուն է դառնում հետխորհրդային Ադրբեջանում: Խորհրդային գաղափարախոսությունը 1950-ական թթ. սկսած խրախուսում էր ազգային ինքնությունների ձևավորումն ու դրա խորհրդային ձևաչափով ներկայացումը: Այդ քաղաքականությունը տարածվում էի ոչ միայն տիտղոսակիր երկրների, այլև ազգային փոքրամասնությունների ինքնությունների «փնտրտուքի» և ձևավորման վրա: Այսպես, ապրելով «խորհրդային երևակայական հասարակությունում», կիսելով երևակայած խորհրդային քաղաքացու արժեքները՝ «հորինվում էին» պատմական նոր նարատիվներ: Նման մի նարատիվ էր «ադրբեջանական հնագույն պատմությունը», որի ձևավորման համատեքստում կառուցվում էր ազգային ինքնությունը: Այս տեսանկյունից քննենք Ադրբեջանի ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի փոխնախագահ ակադեմիկոս Սամեդ Վուրդունի պաշտոնական նամակներն՝ ուղղված Հայաստանի ԽՍՀ ԳԱ նախագահ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին (նկ. 8):

Նամակներից առաջինը գրվել է 1955 թ. փետրվարի 8-ին, Ադրբեջանի ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի փոխնախագահ ակադեմիկոս Ս. Վուրդունի կողմից: Նամակը ուղղված է Հայաստանի ԽՍՀ ԳԱ նախագահ ակադեմիկոս Վ. Համբարձումյանին: Նամակում նշվում է, որ Ադրբեջանի ԳԱ պատմության թանգարանը իրականացնում է Ադրբեջանի հնագույն ժամանակաշրջանին նվիրված ցուցադրություն, և այս ծրագիրը ամբողջացնելու համար խիստ անհրաժեշտ են քարեդարյան գործիքների օրինակներ ՀԽՍՀ ԳԱ Հայաստանի պատմության թանգարանից⁴: Այսպիսով Ադրբեջանի ԳԱ նախագահությունը խնդրում է Վ. Համբարձումյանին հանձնարարական տալ Պատմության թանգարանի տնօրեն Կարո Ղաֆադարյանին 10 անուն, 18 առարկա, իրենց բնութագրերով և թվագրությամբ, ուղարկել Ադրբեջանի պատմության թանգարանին: Ակադեմիկոս Ս. Վուրդունը նշում է նաև, որ ունեն Կ. Ղաֆադարյանի նախնական համաձայնությունը, իսկ կից ներկայացնում է նաև առարկաների ցանկը՝ Ադրբեջանի պատմության թանգարանի տնօրեն Սալեհ Կազիևի ստորագրությամբ: Նամակի ձևակերպումը,

4 Նշենք, որ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և Պատմության և կրթության մշակույթի ինստիտուտի կողմից նախորդ տարի հրատարակված աշխատանքում էլ նշվում է, որ Աշելյան շրջանի գտածոներ Ադրբեջանում մինչ օրս չեն հայտնաբերվել (Беляева 2022, 51):

բովանդակությունը մեր կողմից նշված «ժողովուրդների բարեկամության» համատեքստում «ազգակառուցման» գործընթացը ներկայացնող օրինակ է: Հարևան «բարեկամ» պետությունը իր հնագույն պատմությունը ներկայացնելու համար խնդրում է մեկ այլ «բարեկամ» հարևան պետությունից քարեդարյան գտածոներ: Հետաքրքիր է այն, որ այս գործընթացները «բնական» էին խորհրդային ժողովուրդների համար⁵:

1955 թ. փետրվարի 14-ին այս նամակը ՀԽՍՀ ԳԱ-ից մակագրում են թանգարանի տնօրեն Կ. Ղաֆադարյանին: Հաջորդ օրը Կ. Ղաֆադարյանը նամակ է գրում ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ Մկրտիչ Ներսիսյանին: Նամակում Կ. Ղաֆադարյանը գրում է, որ տարեսկզբին Ադրբեջանի թանգարանի աշխատակիցները այցելել են ՀՊԹ և խնդրել քարեդարյան առարկաներ, բայց այդ առարկաների մի մասը դեռ գտնվում են Ս. Սարդարյանի մոտ, ով դեռ չի հանձնել թանգարանին պեղված առարկաները ամբողջությամբ: Կ. Ղաֆադարյանը նշում է նաև, որ սկզբունքորեն դեմ չէ դիմումին, բայց ձեռնպահ կմնա, քանի դեռ Պատմության ինստիտուտից չեն հանձնվել բոլոր առարկաները: Այստեղ կարևոր ենք համարում ընդգծել Կ. Ղաֆադարյանի ձևակերպումը առ այն, որ «...Սկզբունքորեն համաձայն լինելով Ադրբեջանի թանգարանին որոշ նյութեր տրամադրելու ներկայացվող ցուցակին, առայժմ ձեռնպահ եմ մնում, մինչև Պատմության ինստիտուտից լրիվ չափով քարե գործիքների ստացվելը»: Կ. Ղաֆադարյանի պատասխանը հանգեցնում է այն եզրակացությանը, որը ադրբեջանական ցուցահանդեսի վերնագիրը կամ հնագիտական իրերի օգտագործումը այլ ինքնության ստեղծման համար, կարծեք թե, օրինաչափություն է, ընդունելի է, քանի դեռ իրենք «երևակայված հասարակության» մաս են կազմում (Anderson, 2006):

Առաջին նամակից գրեթե 9 ամիս անց 1955 թ. նոյեմբերի 15-ին ՀՊԹ տնօրեն Կ. Ղաֆադարյանին նամակ է ուղարկում ԱՊԹ տնօրեն Ս. Կազիևը, ով խնդրում է ուղարկել խոստացված քարեդարյան գործիքները, որոնք հայտնաբերվել են Հայաստանում հնագիտական աշխատանքների ժամանակ և ևս մեկ անգամ նշում է, որ այդ առարկաները խիստ անհրաժեշտ են «Ադրբեջանի հնագույն պատմությունը» ցուցադրության համար:

Այժմ ՀՊԹ-ում պահպանված արխիվային նամակներից պարզ չէ «Ադրբեջանի հնագույն պատմությունը» ցուցադրության համար ուղարկվել են 18 քարեդարյան գործիքները իրենց բնութագրերով և թվագրությամբ, թե ոչ: Սակայն, դա այս հոդվածի էական քննարկման թեման չէ, առավել հետաքրքրական է այս նամակագրության ընթացքը:

5 Պատահական չէ, որ 1960-ական թթ. ստեղծվում էին հավասար «ազգային արժեքներ», օրինակ բոլոր միութենական հանրապետությունները պետք է ունենային ժողովրդական գործիքների պետական նվազախումբ, և այն պետությունները, որոնք չունեին, նրանց համար ստեղծվում էին նվազախումբ: Օրինակ՝ Ղազախստանի ժող. գործիքների մի մասը ստեղծել են հայ վարպետները (բանավոր տեղեկությունը՝ Հռիփսիմե Պիկիջյանի): Սա օրինակներից մեկն է, թե ինչպես են միութենական պետությունները միմյանց օգնում «ազգային մշակույթի» ստեղծման հարցում:

Խորհրդային քաղաքականությունը, ազգային ինքնությունը և մշակութային ժառանգությունը

1960-ական թթ. խորհրդային միութենական հանրապետություններում և նրանցում ապրող ազգային փոքրամասնությունների համար պետականորեն մշակվում է «ազգային մշակույթ» ներկայացնելու խնդիրը: Խորհրդային Ադրբեյջանի համար «ազգային մշակույթի» ստեղծումն, ինքնության ձևավորումն առավել բարդ էր, քանի որ լինելով երիտասարդ պետություն, որը ձևավորվել էր խորհրդայնացման ճանապարհով, տարածքի լեզվափոխման, պետականության հիմքերը հաստատելու և խորհրդային հանրապետությունների շարքում հաստատուն տեղ զբաղեցնելու խնդիր ուներ, դրանից էլ առաջանում էր ժողովրդի ծագման և մշակութային ժառանգության հետազոտության խնդիրը (Шнирельман 2003, 119):

1950–1960-ական թթ. Ադրբեյջանում մեծ թափ են ստանում նոր հնագիտական հայտնագործությունները և պատմական ուսումնասիրությունները: Առաջ են գալիս ծագման մի քանի տեսություններ՝ աղվանական, թուրքական, մեդիական, մարական և այլն: Այս բոլոր տեսություններն էլ հիմքում ունենին Ադրբեյջանը տեղաբնիկ ներկայացնելու խնդիրը (Шнирельман 2003, 154): Պատահական չէ, որ 1958–1962 թթ. կազմվում է Ադրբեյջանի պատմության եռահատորյակը, որի առաջին հատորը ընդգրկում էր նախնադարից մինչև Գյուլիստանի պայմանագիրը: Նշվում էր, որ Ադրբեյջանը ձևավորվել է դեռ վաղնջական ժամանակներում, այստեղ է քաղաքակրթական օջախներից մեկը, ձևավորել է յուրահատուկ մշակույթ, գրեթե պատմության ողջ ընթացքում ունեցել է պետականություն և պայքարել է իր ազատության ու անկախության համար տարածաշրջան ներթափանցած նվաճողների դեմ (Шнирельман 2003, 143–144):

Ադրբեյջանական ինքնության ձևավորման ճանապարհին վտանգ են հանդիսացել տարածքում հայկական ինքնության վկայությունները և դրանց համատարած լինելը հատկապես Արցախում, նույնիսկ այդ ժամանակ ադրբեյջանաբնակ վայրերում: Ուստի, ադրբեյջանական պետական քաղաքականության անքակտելի մասն է եղել հայկական ժառանգության յուրացումը՝ սկսած դեռևս խորհրդային տարիների 1930-ական թթ., երբ խորհրդային ինտերնացիոնալիստական քաղաքականության համատեքստում ձևավորվում էին «ազգային նոր ինքնություններ» (Petrosyan 2020, 80–81): Ադրբեյջանական «ազգային ինքնության» փնտրտուքն ընթացավ օտար ինքնությունների՝ մասնավորապես հայկական ժառանգության յուրացման ճանապարհով, որը կոնֆլիկտային բնույթ ստացավ ու խորհրդային և անկախության տարիներին՝ վերածվելով լայնածավալ պատերազմի:

Խորհրդային տարիներին հայկական ժառանգության յուրացումն ընթացել է հիմնականում խորհրդային «թույլատրելի» կամ «ընդունելի» մեխանիզմներով (աթեիզմ, ինտերնացիոնալիզմ, «ժողովուրդների բարեկամություն» և այլն) (Petrosyan 2020): Ուշխորհրդային գաղափարական փոփոխությունները և Խորհրդային Միության փլուզումը հանգեցրեցին «երևակայած հասարակության» փլուզմանը, ինչը ջրի երես հանեց միջէթնիկ և միջպետական կոնֆլիկտները, որոնք, որոշ

դեպքերում (ինչպես օրինակ՝ հայ-ադրբեջանական) վերաճեցին զինված կոնֆլիկտի: Մշակութային ժառանգության թիրախավորումը, վանդալիզմի բազմաթիվ դեպքերը թե՛ պատերազմների ընթացքում, թե՛ հարաբերական խաղաղ պայմաններում, վկայում են, որ ադրբեջանական իշխանությունները ձգտում են բռնաշարժման տարբեր մեխանիզմներ կիրառելով, վերացնել հայության և հայկականության հետքը գրավյալ տարածքներում՝ «լեգիտիմացնելով» իրենց քաղաքականությունը: Ժառանգությունը ինքնության և պատմության վկայությունն է, որի ոչնչացումը կամ խեղաթյուրումը թույլ է տալիս Ադրբեջանի իշխանություններին կեղծ գիտական թեզեր տարածել իրենց «բազմադարյան գոյության» մասին Արցախի տարածքում:

Էրիկ Հոբսբաումը նշում է, որ նոր ձևավորված ազգերը պատմության հետ շարունակականություն ստեղծելու խնդիր ունեն և հաճախ դա տեղի է ունենում «ավանդույթներ հորինելու» պրակտիկայով, որը թույլ է տալիս պատմականորեն հնեցնել պատմությունն ու ինքնությունը (Hobsbawn 1983, 15): Ադրբեջանի դեպքում կարելի է ենթադրել, որ հայկական ժառանգության առկայությունը տարածքում, որը ցուցում է հայերի պատմականորեն բնակվելու և տարածքի հանդեպ ունեցած լեգիտիմությունը, խանգարում է ադրբեջանական «էլիտային» հորինել ավանդույթներ և նրանք դեռևս 1930-ական թթ. որդեգրել են հայկական ժառանգության յուրացման՝ «աղվանացման» և ոչնչացման ուղղությունները:

Եզրակացություն

Խորհրդային տարիները բարդ և հակասական տարիներ են եղել ազգային ինքնությունների ձևավորման և ինքնասահմանման համար: Այդ քաղաքականությունն ուղղորդել, գործիքներ և մեխանիզմներ է ստեղծել խորհրդային ազգային ինքնությունների ձևավորման համար: Որոշ դեպքերում՝ օրինակ մեր քննարկած ադրբեջանական ինքնության ստեղծման դեպքում, խորհրդային լծակները դարձել են ժառանգության «հորինման», օտար ժառանգության (տվյալ դեպքում հայկական ժառանգության) յուրացման ճանապարհով, որը, եթե նախորդ դարի 1960-ական թթ. «փափուկ» ուժի միջոցով էր իրականացվում, ապա 1990-ական թթ. մինչև մեր օրերը «կոպիտ» ուժի կիրառմամբ է ընթանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

Ադրբեջանական ԽՍՀ Ակադեմիայի փոխնախագահ Ս. Վուրգունի նամակը Հայաստանի ԽՍՀ Ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանին, ՀՊԹ արխիվ 1955 թ.:

Բուհ-երի և Գիտ. Հիմնարկների տեսուչ Ոհանյանի պատասխանը Պետական պատմական թանգարանի տնօրենին, ՀՊԹ արխիվ, 1935 թ.:

Հայաստանի Պետական պատմական թանգարանից Մոսկվայի պետական պատմական թանգարանին փոխանցված իրերի հանձնման ակտ, ՀՊԹ արխիվ, 1939 թ.:

ՀԽՍՀ Լուսժողկոմի նամակը Պետական Էրմիտաժի տնօրեն Հ. Օրբելուն, ՀՊԹ արխիվ, 1936 թ.:

Մոսկվայում ՀԽՍՀ մշակույթի տան ներկայացուցիչ Բ. Ի. Ռաստուրսինի՝ Պետական պատմական թանգարանի Ազգագրության բաժնի վարիչ Ստ. Լիսիցյանին փոխանցած իրերի հանձնման ակտ, ՀՊԹ արխիվ, 1938 թ.:

- Պետական պատմական թանգարանից Վրաստանի թանգարանին հանձնված իրերի արձանագրություն, ՀՊԹ արխիվ, 1935 թ.:
- Պետական պատմական թանգարանի տնօրենի պատասխանը Լուսժողկոմ ընկ. Արտո Եղիազարյանին, ՀՊԹ արխիվ, 1935 թ.:
- Պետական Էրմիտաժի գիտնական քարտուղար Վոյտովի նամակը Պետական պատմական թանգարանին՝ նյութերը վերադարձնելու վերաբերյալ, ՀՊԹ արխիվ, 1937թ.:
- Պետական պատմական թանգարանի տնօրեն Պողոսյանի նամակը Յալթայի երկրագիտական թանգարանին, ՀՊԹ արխիվ, 1938 թ.:
- Պետական պատմական թանգարանի տնօրեն Կ. Ղաֆադարյանի նամակը Հայաստանի ԽՍՀ Ակադեմիայի փոխնախագահ ընկ. Մ. Ներսիսյանին:
- Ադրբեջանի պատմության թանգարանի տնօրեն Մ. Կազիևի նամակը Պետական պատմական թանգարանի տնօրեն Կ. Ղաֆադարյանին, ՀՊԹ արխիվ, 1955 թ.:
- Ռուստավելոն նվիրված ցուցահանդեսի շրջանակում Լենինգրադի Համալսարանի պրոֆեսոր Վ. Դ. Դոնդուային հանձնված նյութերի ակտը, ՀՊԹ արխիվ, 1938 թ.:
- «Ստալինյան սահմանադրություն» ցուցադրությանը հանձնված նյութերի ընդունման ակտ, ՀՊԹ արխիվ, 1937 թ.:

Պարբերական մամուլ

«Կոմ(մ)ունիստ» թերթ, Երևան, 1923, № 4–5–6:

Գրականություն

- ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՍՈՒՐԱԳՅԱՆ, 2020 – Պետրոսյան Հ., Սուրադյան Հ., Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Երևան, 2021:
- ՔԱՐԱՄՅԱՆ 1928 – Քարամյան Ա., Կուլտուրական շինարարության ճակատում, «Լենինյան ուղի», 1928, № 1- 2, էջ 45–52:
- ANDERSON 2006 – Anderson B., *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism*, London-New York, 2006.
- MARTIN 2001 – Martin T., *The Affirmative Action Empire: Nations and Nationalism in the Soviet Union in 1923–1939*. Ithaca-London, 2001.
- MOORE 2001 – Moore D., Is the post- in postcolonial the post- in post-Soviet? Toward a global postcolonial critique. PMLA. Publications of the modern language association of America, 2001, Vol. 116, № 1, pp. 111–128. DOI: <https://doi.org/10.1632/pmla.2001.116.1.111>
- FOREST, JOHNSON 2011 – Forest B., Johnson J., Monumental politics: regime type and public memory in post-Communist states. *Post-Soviet affairs*, 2011, Vol. 27, № 3, pp. 269 –288. DOI: <https://doi.org/10.2747/1060-586X.27.3.269>
- PETROSYAN 2020 – Petrosyan H., *Ethnocide in Artsakh: The Mechanisms of Azerbaijan's Usurpation of Indigenous Armenian Cultural Heritage, Cultural Heritage Experience & Perspectives In International Context Proceedings Of The Rochemp Center International Conference 23rd–24th of January, Yerevan, 2020*, pp. 79–90.
- SPIVAK 2006 – Spivak G. C., Condee N., Ram H., Chernetsky V. Are we postcolonial? *Post-Soviet space*. PMLA. 2006, Vol. 121, № 3, pp. 828–836.
- SUNY 1993 – Suny R., *Looking Toward Ararat: Armenia in Modern History*, Bloomington and Indianapolis, 1993.
- YURCHAK 2005 – Yurchak A., *Everything was forever, until it was no more: The Last Soviet Generation*, 2005.
- БЕЛЯЕВА 2022 – Беляева Е. В., *Ашельские памятники Закавказского Нагорья*, Санкт Петербург, 2022.
- МОЛЬ 2008 – Моль А., *Социодинамика Культуры*, Москва, 2008
- ШНИРЕЛЬМАН 2003 – Шнирельман В. А., *Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье*, Москва, 2003.

Haykuhi Muradyan

PhD in Cultural Studies

Yerevan State University

haykuhi.muradyan@gmail.com

Nzhdeh Yeranyan

PhD in Cultural Studies

History Museum of Armenia

Institute of Archaeology and Ethnography NAS RA

nzhdehyan@gmail.com

Hamazasp Abrahamyan

PhD Student

History Museum of Armenia

Institute of Archaeology and Ethnography NAS RA

abrahamyanhamazasp@gmail.com

THE CONSTRUCTION OF NATIONAL IDENTITY AND THE SOVIET POLICY OF “THAW”: ABOUT SOME ARCHIVAL LETTERS OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

Keywords. soviet “Thaw” policy, “Brotherhood of Peoples”, Soviet national identity, construction of historical past, imagined community, History Museum of Armenia, archival letter.

The article presents the Soviet 1960s in the context of the “Thaw” policy, the process of forming national identities, actualizing identities, highlighting the historical past, “creating a new historical past” in the case of some nations, certain manifestations of the politics of “brotherhood” and “neighborhood” in the construction of national identity and historical past.

The research is highlighted from the point of view of the publication of the archival documents of the History Museum of Armenia, its content and ideological analysis. We have especially considered the features of cooperation of interstate institutional structures in the formation of the Soviet national identity, the Soviet language formulations, the Soviet mechanisms of historical past construction. Although the Soviet “brotherhood of peoples” policy was formed during the Stalin period, it became more institutionalized in the context of “Khrushchev’s Thaw” policy.

The research is mostly based on some documents of the archives of the History Museum of Armenia in the 1930s–1950s, where there is information about the transfer of materials by the State Historical Museum of Armenia (now the History Museum of Armenia) to the museums of other countries of the USSR for the purpose of temporary or permanent exhibition.

Այկուի Мурадян

Кандидат исторических наук

Ереванский государственный Институт
haykuhi.muradyan@gmail.com

Նжде Еранян

Кандидат исторических наук

Музей истории Армении
Институт археологии и этнографии НАН РА
nzhdehyan@gmail.com

Амазасп Абраамян

Музей истории Армении

Институт археологии и этнографии НАН РА
abrahamyanhamazasp@gmail.com

КОНСТРУИРОВАНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ И СОВЕТСКАЯ ПОЛИТИКА «ОТТЕПЕЛИ»: О НЕКОТОРЫХ АРХИВНЫХ ПИСЬМАХ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

Ключевые слова: советская политика «оттепели», «Братство народов», советская национальная идентичность, конструирование исторического прошлого, воображаемая общность, Музей истории Армении, архивная письмо.

В статье представлены советские 1960-е годы в контексте политики «оттепели», процесс формирования национальных идентичностей, актуализация идентичностей, выделение исторического прошлого, «создание нового исторического прошлого» в случае некоторых народов, отдельные проявления политики «братства» и «соседства» в конструировании национальной идентичности и исторического прошлого. Исследование выделяется с точки зрения публикации архивных документов Музея истории Армении, его содержания и идеологического анализа. Рассмотрены особенности взаимодействия межгосударственных институциональных структур в формировании советской национальной идентичности, советские языковые формулировки, советские механизмы конструирования исторического прошлого. Хотя советская политика «братства народов» формировалась в сталинский период, в условиях политики «хрущевской оттепели» она стала более институционализированной. Исследование в основном основано на некоторых документах архива Музея истории Армении 1930–1950-х годов, где есть сведения о передаче материалов Государственным историческим музеем Армении (ныне Музей истории Армении) в музеи других стран СССР с целью временной или постоянной экспозиции.

ДИРЕКТОРУ ГОС.ЭРМИТАЖА
АНАТОЛИЮ И.А.ОБРЕМЬ

В связи с II-ым Международным Конгрессом Иранского искусства и археологии, на выставке, организованной Гос. Эрмитажем, по просьбе Наркомпроса Р.С.Ф.С.Р. тов. Бубнова, для временной экспозиции, из Гос. Исторического Музея Армянской ССР, были посланы Эрмитажу и по особому акту от 14-го сентября 1935 года свыше ему 16 археологических экспонатов.

Дирекция Гос. Эрмитажа эти экспонаты по условию должны были вернуть по принадлежности в Ереван через 3 месяца однако, несмотря, что условленный срок давно прошел, и Гос. Исторический Музей несколько раз уже обращался с просьбой вернуть эти экспонаты, т.к. они весьма необходимы Музею для научно-исследовательской работы, последние до сих пор остаются в Эрмитаже.

В Ленинграде командирован научный сотрудник Гос. Ист. Музея Армении тов. Н. Говальди, который получено получить от дирекции Эрмитажа вышеуказанные 16 экспонатов и отправить их в Ереван.

Согласно условию и телеграмме т. Бубнова, все расходы, связанные с отправкой экспонатов туда и обратно в Ереван, Гос. Эрмитаж обязан принять на себя.

Прислать соответствующее распоряжение о срочной отправке экспонатов в Ереван.

При сем прилагается копия акта о передаче экспонатов Гос. Ист. Музею Армянской ССР и о получении их Эрмитажем.

НАЦИОНАЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКИЙ
АРМЯНСКИЙ МУЗЕЙ

ГОСУДАРСТВЕННЫЙ ЭРМИТАЖ

г. Ленинград, Невский пр. 29

№ 274-61 и 223-62 (Секретариат)

17 июля 1937
И. А. Обремь

ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ
г. Ереван

Государственный Эрмитаж настоящим сообщает, что 9-го июля с.г. Вам отправлены предметы фаянса на выставке, посвященной II Международному Конгрессу по Иранскому искусству и археологии в г. Ленинграде. Эти предметы переданы в Ваш Музей Экспонатным Комитетом ССР Армении в соответствии с актом № 520.

Получение вышеизложенных предметов подтвердить.

ПРИЛОЖЕНИЕ: Акт № 520 в количестве № 110425.
Н. С. Чечевого Секретаря *И. А. Обремь* /308705/

- Եկ. 1. «Իրանի արվեստի միջազգային կոնգրեսի» շրջանակում Պերսիական պարսկական թանգարանից հանձնված նյութերին վերաբերող փաստաթղթեր.
- ա) Պերսիական պարսկական թանգարանի փնտրելի պարսկասեր Լուստողյանը ընկ. Արտո Երևանցիյանին: ՀՊԹ, արխիվ, 1935 թ.: բ) Բուհ-երի և Գիտ. Հիմնարկների փետուց Օհանյանի պարսկասեր Պերսիական պարսկական թանգարանի փնտրելիին: ՀՊԹ, արխիվ, 1935 թ.:
 - գ) ՀԽՍՀ Լուստողյանի նամակը Պերսիական Էրմիտաժի փնտրելու Ս. Օրբելյան: ՀՊԹ, արխիվ, 1936 թ.:
 - դ) Պերսիական Էրմիտաժի գիտական բարորոշար Կոյրոյի նամակը Պերսիական պարսկական թանգարանին՝ նյութերը վերադարձնելու վերաբերյալ: ՀՊԹ, արխիվ, 1937 թ.:

Копия с копии.

А К Т

Июля 3-го дня 1937 года гор. Москва. Составлен настоящий акт в следующем: - от Постоянного Представительства Арм. ССР в лице тов. Ходжамирjana передан Музею Народов СССР в лице тов. Дорохина во временное пользование для выставки "Сталинская Конституция" - следующие предметы:

1. Маленький коврик с портретом т. МИКОЯНА (работа ученика ковроткаческой артели).
2. Литографские отпечатки рисунков ковров (худ. Кишияна) - 6 штук.
3. Серебр. позолоченная чаша с портретом поэта Туманяна и иллюстрация из "Капли Мёда" - (Артель "Ван") художн. Ацагорцяна д. № 809.
4. Серебр. чаша с изображен. армянск. орнамент. (той же арт. № 607).
5. Серебр. подстаканник № 622 (той же артели).
6. Серебр. браслет с медалями 38-ти домашн. предметов № 3135.
7. Кувшин глиняный раб. художн. Тарагроса.
8. Табачный вышит. кювет на шелку разноцветными шелковыми нитками № 1397.
9. Тобетейка из оисера № 252.
10. Носки пестрые шелковые - одна пара № 1389-3.
11. Перчатки шелковые пестрые одна пара № 1625
12. Женский головной узор № 99.
13. Т о ж е № 3092/35.
14. Кружевной треугольник из белой нитки.
15. Кружевная салфетка из белой нитки.
16. Полотенце с вышитыми шелковыми концами № 3111.
17. Т о ж е № 228.
18. Три картины масляными красками худ.-самоучки Бабабяна.
19. Макет Севанской гидро-электро-станции.
20. Рисунки армянск. миниатюриста худ. Тарагроса 16 листов.
21. Три портрета того же художника (армянки в национ. костюме)
22. Обложки с армянск. миниатюр (того же художн. на 7-ми лис.)
23. Портреты на дереве т. т. СТАЛИНА, ВОРОШИЛОВА и БЕРИЯ (худож. самоучки Чалабяна).
24. Рисунки армянских орнаментов ковров. - худ. Ахикяна - 9 листов.
25. Акварель рисунка армянск. ковра худож. Кишияна.

П е р е д а н (Ходжамирjan)

П р и н я л (Дорохин)

С подлинным верно: (Подпись) - (Дорохин)

В е р н о (Подпись)

Копия с копией верна:

Секретарь Муз. Уч-завед.: *Մ. Կանայ*

21/8-37 г.

Акт ЗВР

Мы нижеподписавшиеся проф. Ленинградского
 Университета В. Д. Лонгва и в.и.об.зав. Музея Археол.
 Отдела Гос. Истор. Музея А.С.С.Р. Е. Д. Байбуртян сообразили
 настоятели акт в том, что тов. Лонгва принял, а
 г. Байбуртян сдал и.и.переписанные экспонаты
 Гос. Истор. Музея, для временной выставки Русскими
 сроком по 15ое марта 1938 г.г.

По истечении этого срока Ленинградский Университет
 обязуется возвратить Музею все и.и.переписанные
 экспонаты.

фрагмент глиен. кубика со штампованным поземим
 орнаментом за № 114.

фрагмент глиен. кубика со штампов. позем. орнам. за № 166.

фрагмент глиен. кубика со штампов. позем. орнам. за № 125.

Кашпета с 7ми низкими голубых поземных бус различной
 величины в количестве 72 ш. 2бу.
 сердцевидных бус за № 112

970; 975; 977; 968; 959 (ак); 961; 941(а); 946(а); 949; 947(а); 951; 952(а.б.)
 947(б); 1006; 958(а); 957; 956; 943; 950; 959; 944(а); 979; 962; 944(б).
 946(б); 945; 941(б); 942; 960; 963; 964; 940.

Кашпета с 13ми фрагментарными поземными бусами с периодич. надписями
 №№ 704; 717; 440; 705; 659; 537; 574; 484; 377; 693; 447(а); 602(б.); 603(а):

Кашпета с 6ти фрагмент. поземных бусок с поземом а и поземом
 фением различной формы, 2бу. поземными и одной кашп. кубиком
 за №№ 193; 201; 200; 196; 1237; 197; 199; 1229; 1228;

Кашпета под окном вышивки поземной поземной поземной поземной
 за № 1121.

1 Бронзовая фарфоровая на трех ножках за № 1332.

Бронзов. половинка "ножки в виде барса за № 1346

Бронз. ручка с поземной барса за № 1340а

/ с.и. на обороте /

№ 11. Бронзовая: Замоч в виде П. за № 1549.

С г. а. д. Е. Байбуртян.

Принимает: В. Лонгва

6/1.38.

г. Эривань.

Նկ. 3. Թուրքիայից նվիրված ցուցահանդեսի շրջանակում Լենինգրադի Համալսարանի պրոֆեսոր Վ. Դ. Դոնդուային հանձնված նյութերի ակտը: ՀՊԹ, արխիվ, 1938 թ.:

Ա Կ Թ

1938 ԿՈՒԱ "3" ԿՈՒԼԱ Տ.Գ. Գ.ՄՈՍԿՎԱ.

ՄԿ, ՆԻՅԵՍԻԳՆԱՎԻՏԵՍԻԱ - ԶԱՎ.ԵՏՆՈԳՐԱԳԻՇԵՍԿԻ ՄՈՒԶԵՍ ԱՐՄՅԱՆՍԿՈՅ ՏՍՐ ԹՎ.ԼԻՍԻՇԿԱՆ Տ.Ը. ՍԵՐՈՒՆ ՍԵՐՈՒՆԻ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԻ ԴՈՄԱ ԱՐՄՅԱՆՍՍՐ ԵՄ ՄՈՍԿՎԵ Թ.ՐԱՏՐՍԻՆ Բ.Կ. ՍԵՐՈՒՆԻ ՆԱՏՅԱՑԻՄ ԵՎ ՆԻՅԵՍԼԵԴՈՒՅԿԵՐ:

ԶԱՎ.ԵՏՆՈԳՐԱԳԻՇԵՍԿԻ ՄՈՒԶԵՍ ԱՐՄՅԱՆՍՍՐ Թ.ԼԻՍԻՇԿԱՆ Տ.Ը. ՍԵՐՈՒՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԻ ԴՈՄԱ ԱՐՄՅԱՆՍՍՐ Թ.ՐԱՏՐՍԻՆԱ Բ.Կ. ՆԻՅԵՍԼԵԴՈՒՅԿԵՐ ԵՎ ՍԵՐՈՒՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԻ ԴՈՄԱ ԱՐՄՅԱՆՍՍՐ Թ.ՐԱՏՐՍԻՆԱ Բ.Կ. ՆԻՅԵՍԼԵԴՈՒՅԿԵՐ ԵՎ ՍԵՐՈՒՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԻ ԴՈՄԱ ԱՐՄՅԱՆՍՍՐ Թ.ՐԱՏՐՍԻՆԱ Բ.Կ. ՆԻՅԵՍԼԵԴՈՒՅԿԵՐ:

- | | |
|--|--------|
| 1. ԲՈՒԿԱ ՏԵՐԵԲՐԱՆԻ Ս ԲՅՈՒԿՈՅ | ՄԿ. 1 |
| 2. ԹԵԲԱԿԵՐԿԱ - ՍԵՐԻՍԿԱՐԻ Մ-6 | " 2 |
| 3. ԿՈՒՐԵՆՆԻՇԱ ՏԵՐԵԲՐԱՆԱ Մ-3 | " 3 |
| 4. ԿՈՐՈՒԿԱ ՏԵՐԵԲՐԱՆԱ Մ-2 | " 4 |
| 5. ՍԵՐԻՍԿԱՐ ՏԵՐԵԲՐԱՆԻ Մ-6 | " 5 |
| 6. ԳԵՐԲ ՏԵՐԵԲՐԱՆԻ | " 6 |
| 7. ՆՈՍԿԻ ՍԵՐՏՅԱՆԵ ՎԻՅԻԹԵ Մ-10 | ՍԵՐ. 1 |
| 8. ԳՐՈՒՆԻԿԻ ՎԻՅԻԹԵ Մ-11 | ՄԿ. 2 |
| 9. ՍՈԼՈՒՆԵՆԵ ՎԻՅԻԹԵ ՄԻՍՍՈՐԻ 18 | " 3 |
| 10. | " 4 |
| 11. Ս Ե Ր Մ ՈՒՐ Մ Ե Ր Մ ՈՒՐ 18 ՍՄ. | ՄԿ. 5 |
| 12. " " " 22 ՍՄ. | ՄԿ. 6 |
| 13. " " " 50 | ՄԿ. 7 |
| 14. " " " 47 | ՄԿ. 8 |
| 15. " " " 50 | ՄԿ. 9 |
| 16. ԳՐԱԲԻՆ Ս ՍԵՐԵԲ. Ս ԿՐՈՒՆԻ ԵՄԱԼՅՈՒ | ՄԿ. 10 |
| 17. ՎԱՅՈՒԿԱ ՏԵՐԵԲՐԱՆ. Ս 2-ՄԱ ՅԵՆՏԿԻՄԻ ՍԵՐՏՐԵՏԱՆԻ | |
| 18. ՎՈՒԿ-ՆՈՒԹ, Ս ՍԵՐՏՐԵՏՈՒՄ Թ.ՏՏԱԼԻՆԱ | |
| 19. " " " Թ.ԿԱԼԻՆԻՆԱ | |
| 20. " " " Թ.ՄՈԼՈՏՈՎԱ | |


- 21. ՍՈԼՈՒՆԵՆԵ, ՎԻՅԻԹԵ ԿՐՈՒՆԻ ԲՈՒՄԱԳՈՅ ԵՎ ՅՈԼՈՒՄ
- 22. ՍԵՐՏԵՏԿԱ ՎԻՅԻԹԱ ԿՐՈՒՆԻ ԲՈՒՄԱԳՈՅ
- 23. ՄԱԼԵՆՅԱԿԱ ՕՎԱԼՅԱՆԱ ԿՐՈՒՅԵՎԱՆԱ ՍԵՐՏԵՏԿԱ.
- 24. ԱՅԵՆՅԱԿԱ ԿՐՈՒՆԱ Ս ԴՐՈՒՆԿԱԿԻ ՍՈԼՈՒՆԱ.
- 25. ՍՈՒՎԵՐ ԲԱՅՄ. 1.70 X 2.60
ՎԵՍԵ ԲԱՅՄԻ ՐԱՄԻՆԵ.

Վ ԿԵՄ ԵՎ ՍՈՍՏԱՎԵՆ ՆԱՏՅԱՑԻՄ ԱԿՏ ԵՎ 2-Կ ԵՎՅ.

ՏՐԱԼ- ՐԱՏՐՍԻՆ Բ.Կ. *Բ. Բատրիստին*
ՍՐԻՆՅԱԼ- *Լ. Լիսիցկին* Տ.Ե.

Վ. Լիսիցկին
Գրադարանի Կարգավորման Կարգավորման Առարկա

Նկ. 4. Սուվիպյալով ՀԵՍԱՀ մշակույթի տան ներկայացուցիչ Բ. Բ. Բատրիստինի՝ Պետրական ցարինական թանգարանի Ազգագրության բաժնի վարիչ Սր. Լիսիցկյանին փոխանցած իրերի հանձնման ակտ: ՀՊԹ, արխիվ, 1938 թ.:



Նկ.5. Պերսիական պարմական թանգարանից Կրասարանի թանգարանին հանձնված իրերի արձանագրություն: ՀՊԹ, արխիվ, 1935թ.:

А К Т

124

составлен в том, что согласно разрешения Наркомпроса Армении от 25/У-1939г. директор Гос. истор. музея Армении тов. ПОГОСЯН и исполнявший обязанности зав. археологическим отделом тов. ВАЙБУРТЯН сдали а ст. научнии сотрудники Г.И.М. А.В.ЗАКС приняла следующие фрагменты керамики и стекла, собранные на Двинском городище в 1937 г. (Намарлинский р-н Арм.ССР), для Гос. исторического музея (г. Москва) за № 1619.


1.	Фрагмент дна поливной чашки со светло-зеленой подливкой
2,3,4,5,6	"-" поливной керамики желто-зеленого цвета
7,8,9,10	"-" поливной керамики особой техники
11,12	"-" гладко-синей поливной керамики
13	"-" светло-голубой поливной керамики
14.	Часть борта поливной чаши белого цвета
15.	Фрагмент св. голубого фаянса
16.	Часть поливной чашки с зеленой подливкой
17,18,19.	Фрагменты поливной керамики с зеленой подливкой
21,22,23,24.	"-" " " " " гладко-зеленой
25.	"-" горла зеленого поливного сосуда
26.	"-" борта зеленой поливной чаши
27.	Дно поливной чаши св. желтого цвета
28.	Фрагмент ртутного сосуда
29.	"-" неполивного сосуда с налепным и нарезным орнаментами
30.	Фрагмент древней керамики черного цвета с нарезным орнаментом.
31,32,33,34	"-" стеклянных сосудов.

СДАЛИ: ДИРЕКТОР ИСТ. МУЗЕЯ АРМЕНИИ *Погосян* (ПОГОСЯН)


ИСП. ОБЯЗ. ЗАВ. АРХЕОЛОГ. ОТДЕЛОМ *Вайбурт* (ВАЙБУРТЯН)

ПРИНЯЛА: СТ. НАУЧН. СОТРУДН. ГИМ *Закс* (ЗАКС)

Նկ. 6. Հայաստանի Պարսկան պարսկական թանգարանից Մոսկվայի պարսկան պարսկական թանգարանին փոխանցված իրերի հանձնման ակտ: ՀՊԹ, սրիսիվ, 1939թ.:



Նկ. 7. Պերսկան ցարմնական թանգարանի փոօրնե Պողոսյանի նսնակը
 Յալթալի երկրագիրական թանգարանին: ՀՊԹ, արխիւվ, 1938 թ.:



- Նկ. 8. Արրեջանի պարունոթյան թանգարանից Պեղական պարունական թանգարանից (Երևան) ակնկալվող առարկաներին վերաբերող գրություններ.
- ա) Արրեջանական ԽՍՀ Ակադեմիայի փոհնախագահ Ս. Վորգուհի նամակը Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանին: ՀՊԹ, արխիվ 1955թ.:
 - բ) Պեղական պարունական թանգարանի տնօրեն Կ. Ղաֆադարյանի նամակը Հայկական ԽՍՀ Ակադեմիայի փոհնախագահ ընկ. Մ. Ներսիսյանին: ՀՊԹ, արխիվ, 1955թ.:
 - գ) Արրեջանի պարունոթյան թանգարանի տնօրեն Մ. Կազիկի նամակը Պեղական պարունական թանգարանի տնօրեն Կ. Ղաֆադարյանին: ՀՊԹ, արխիվ, 1955թ.:

16/11 55
06-23
14-1

ՀԱՅԿ•ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՆԵՐԻ ԱՅԱԴԵՄԻԱԹԻ ՎԻՅԿՊՐԵՁԻԴԵՏ

ԳԱ ԻՍԿԱԿԱՆ ԱՆՊԱՄ ԸՆԿ• Մ• ԵՒՐՄԻՍԹԱՆԻԵ

Աղբբեջանի Պատմութեան Բանաւարանի աշխատակիցները 1955 թ. սկզբներին եկան Շրեան և քարեզարյան էքսպոնատներ խնդրեցին իրենց Բանաւարանի համար:

Ես նրանց խնդրեցի այդ հարցը պաշտոնապես դնել ԳԱ Նախագահութեան առաջ, որպէսզի հնարավորութեան ունենանք բավարարելու:

Այժմ նրանց ներկայացրած ցուցակի մեջ նո. 1-ի տակ եղած վաղ շեւ ուշ շեւյան ձեւով հատիչները մենք չունենք, համարաբար այդ ցուցակը Աղբբեջանի Բանաւարանի ընկերներին տվել է Պատմութեան Ինստիտուտի աշխատակից Սանդրո Սարգսյանը՝ իր մոտ պահուող նյութերի հիման վրա, որոնք համաւորեն մինչև այժմ չի հանձնուած Բանաւարանին:

Սկզբունքորեն համաձայն լինելով Աղբբեջանի Բանաւարանին, որոշ նյութեր տրամադրելու, ներկայացվող ցուցակին առայժմ ձեւնպահ եմ մնում, մինչև Պատմութեան Ինստիտուտից չըրիվ չափով քարեզարդիքների ստացվելը:

Դ Ի Ր Ե Կ Տ Ո Ր՝ /Կ. ՂԱՖԱՆՍՅԱՆ/

Azərbaycan SSR Գիտությունների Ազգային Ակադեմիայի
 Azərbaycan Tarixi Muzeyi
 Bakı, Məlimni küçəsi, 4. Tel. № 3-64-22, 3-36-48

Академия наук Азербайджанской ССР
 Музей Истории Азербайджана
 Баку, ул. Малигина, 4. Тел. 3-64-22, 3-36-48

Tel. № 298
 15 ноября 1955 г.

ЗАКАЗЕМЫЙ КАРО ГРИГОРЬЕВИЧ!
 Просим Вас прислать нам обещанные дубликаты палеолитических орудий труда, обнаруженные при археологических раскопках Армянской ССР. Они нам необходимы для показа в отделе экспозиции: "Древняя история Азербайджана". Коллектив отдела древней истории заранее благодарит Вас за оказанное внимание.

Директор Музея истории Азербайджана /М.Казиев / Казиев М.А./

